

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔՏԱԹՆԵՐԸ ԴՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂՄԱԳՈՐԾԱԿԱՆ
ՏՈՒՄԱԳԱՇՏՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ժողովրդական բանահյուսության և, մասնավորապես, հեքիաթների նկատմամբ Հ. Թումանյանի հետաքրքրությունն ու անհուն սերը սկսվում է վաղ մանկության տարիներից և հարատևում նրա ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում: Հ. Թումանյանի անձնական դրապարանի քննությունը ցույց է տալիս, որ նա լավատեղյակ է եղել ժամանակի ոռոսական և եվրոպական բանագիտության նվաճումներին, որոնք իրենց դրոշմն են թողել նրա բանագիտական ճաշակի ու ըմբռնումների վրա: Հ. Թումանյանը ժողովրդական բանահյուսությանը մոտեցել է որպես հետազոտող, մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրելով հայկական, վրացական, ոռոսական, գերմանական, իտալական, ճապոնական, դանիական, արաբական, թուրքական, սլավոնական, մորդովական, բոսնիական և այլ ժողովուրդների բանահյուսական նմուշներն ամփոփող դանազան ժողովածուներ և հանգամանորեն քննելով դրանց պատրաստման հիմնական սկզբունքները: Այս առումով Հ. Թումանյանը, ժողովրդական բանարվեստի գիտակի հոտառությամբ, ժամանակի բանահյուսական բազմաթիվ ժողովածուներից լավագույնը համարել է Ալեքսանդր Նիկոլաևիչ Աֆանասևի (1826—1871) կազմած «Ռուսական ժողովրդական հեքիաթների» հրատարակությունները¹ և հեքիաթների գեղարվեստական մշակման ժամանակ կատարած իր ստեղծագործական աշխատանքի ընթացքում բազմիցս դիմել է դրանց: Ա. Աֆանասևը քաջատեղյակ էր եվրոպական բանագիտության նվաճումներին և իրեն համարում էր Երիմե եղբայրների հետևորդը:

Ինչպես հայտնի է, ժողովրդական բանահյուսության և ազգագրության նյութերը մշակելու և ըստ արժանվույն ուսումնասիրելու հարցով առաջին անգամ լրջորեն զբաղվել են Գերմանիայում, որտեղ սկանավոր գիտնական Յակոբ Գրիմմը (1785—1863) իր «Երեմանական իրավունքի հնությունները» (1828) և «Երեմանական դիցաբանություն» (1835) աշխատություններում առաջին անգամ տվել է բանահյուսության գիտական սիստեմավորումը: Գրիմմ եղբայրները համակողմանիորեն հետապնդում են ժողովրդի բանահյուսական գանձերը, մասնավորապես հեքիաթներն ու ավանդությունները, և հավաքելով ու մշակելով դրանք՝ համատեղ լույս են րնծայում «Մանկական ընտանեկան հեքիաթներ» (1812—1814) և «Գերմանական ավանդություններ» (1816 և 1818) ժողովածուներով: Այս գրքերը լայն արձագանք են գտնում եվրոպական երկրներում և մեծ հետաքրքրություն առաջացնում ժողովրդական բանարվեստի նկատմամբ:

¹ А. Н. Афанасьев, Народные русские сказки, М., 1855—1863. 1873 թ. իրականաբար է այս ժողովածուի 2-րդ հրատարակությունը, որտեղ նյութերը ենթարկված են նոր առասկարզման:

Իսկ Գրիմմ եղբայրները միշտ չէ, որ սահմանում էին խիստ գիտակա- նությունը սկզբունքը: Նյութերի հետազոտման և մշակման ընթացքում առաջ- նությունը տալով նույն հեթաժեհ զանազան տարբերակների միջև եղած ընդ- ամուր մոտիվներին (գիտնական եղբայրներն այն կարծիքին էին, որ եթե ժամանակի ընթացքում տարբեր ասացողների մոտ հեթաժեհ պատումը որոշ փոփոխություններ է կրում, ապա նրա բուն էությունը մնում է նույնը, ան- փոփոխ)՝ նրանք վերջինս լրացնում էին հեթաժեհ այլ տարբերակներից քաղած զրվագներով ու մոտիվներով, հղկելով պատումի լեզուն ու ոճը և տալով հե- թաժեհի «արտաքին ձևավորումը»:

Հ. Թումանյանը քաջատեղյակ էր այս հեղինակավոր գիտնականների սկզբունքներին (նրա անձնական զրադարանում պահվում են Գրիմմ եղբայր- ների հեթաժեհների բոլոր հրատարակությունները) և միշտ չէ, որ ընդունում էր զրանք: Երբ Հայոց հրատարակչական ընկերությունը նրան առաջարկում է թարգմանել Գրիմմ եղբայրների բոլոր հեթաժեհները, նա իր ընկերոջը՝ ասա- ռական-մշակութային գործիչ Ա. Զարգարյանին գրում է. «Ես ամբողջ չեմ թարգմանիլ: Վթարգմանեմ միայն էն հեթաժեհները, որ ես հավելնում եմ և կամ կարևոր եմ համարում»²: Ավելի ուշ, 1922 թ. Պ. Մակինցյանին ուղղած նամա- կում, հիշելով այս միջադեպը, Հ. Թումանյանն իր պատկերավոր ոճով գրում է. «Կարծում եմ, թե է՛ն հենց անունը հեթաժեհ՝ վերջացավ: Գրիմմի անունն էլ վրեն: Կարծում եմ՝ հեշտ բան է հեթաժեհ մշակելը: Գրիմմները նազիվ մի բանի հեթաժեհ ունեն մշակված: Մնացածը ժողովրդական հեթաժեհներ են, խառնած, աղավաղած ու փյաքած»³:

Իսկ Ա. Աֆանասևը, ի տարբերություն Գրիմմ եղբայրների, բովանդակու- թյամբ նման նյութները խմբավորել է և ներկայացրել իբրև տվյալ հեթաժեհի տարբեր վայրերում տարածված զանազան տարբերակներ: Պատասխանա- տվություն մեծ զգացումով մոտենալով հեթաժեհների հավաքման և հրատարակ- ման գործին՝ նա գտնում էր, որ հեթաժեհները այնքա էլ գրի անվան բառացի, առանց բանահավաքի անհարկի խմբավորման և լեզվական միջամտության, կից նշելով տվյալ նյութի գրության վայրը և տեղեկություններ տալով գրառման սկզբունքների մասին, սկզբունքներ, որոնք այնուհետև ընդունվեցին բանագի- տություն կողմից, և որոնց հետևում են մինչև օրս:

Հայ իրականության մեջ ևս սկսեց աճել հետաքրքրությունը ժողովրդա- կան բանավոր՝ ստեղծագործության նկատմամբ: Պարբերական մամուլում («Բանավանդ», «Արարատ», «Արծաթի վասպուրականներ», «Արևելյան մամուլ») սպաղրվում են ժողովրդական բանահյուսության փշրանքներ և ազգագրա- կան նյութեր: Աստիճանաբար անհրաժեշտություն է առաջանում նաև այս ամենը սխտեմավորել և հետազոտել: Այս առումով առաջին փորձը Ղ. Ալիշա- նի «Հայոց երգը ուսմականք» ժողովածուն է (Վենետիկ, 1852), որին հաջորդում են Գարեգին Սրվանձալանցի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մեծի զուռ» (Կ. Պոլիս, 1874) և «Մանանաս» (Կ. Պոլիս, 1876) ժողովածուները, որ- տեղ առաջին անգամ գրասեր լայն շրջաններին է ներկայացվում իր գործին սիրահարված ու գիտակ բանադետի ու ազգագրագետի զրի առած մեր ազգա- յին վեպի ընագիրը, զանազան երգեր ու զրույցներ և՛ ասպուրականի հեթաժե-

² Հոգի: Թումանյան, Երկերի ժողովածու, Ե, Երևան, 1945, էջ 392:

³ Նույն տեղում, էջ 472:

ների մի փունջ՝ միավորված «Հայրենյաց վեպը և գրույցը» խորագրի տակ: Այս ժողովածուները մեծ հետաքրքրություն և աշխուժություն առաջացրին հասարակության լայն զանգվածների մեջ, հրախուսված իր սկսած գործի հաջողությամբ՝ Գ. Արվանձտյանցը հետագայում (1884) լույս է բնծայում ևս մի բանահյուսական ժողովածու՝ «Համով-հոտով» (Անդրազանալով Գ. Արվանձտյանցի՝ «անուշ, հայրենախոս բանաստեղծի», հայագիտությանը մատուցած անգնահատելի վաստակին՝ Հ. Թումանյանը նրա համով-հոտով զրբերը համարում է գեղեցիկ ծաղկեփնջեր, «որոնք, ինչպես էլ կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ»⁴:

Արևելահայ իրականության մեջ այս գործի ոահվիրան, անխնջ բանահավաք և մշակութային գործիչ Տիգրան Նավասարդյանցն է, որը երկար տարիներ հավաքելով Հայաստանի զանազան զավատների բազմաթիվ հեքիաթները, 1882—1903 թթ. բնթացրում հրատարակում է «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն՝ 10 պրակով: Այս ժողովածուի առաջին պրակի առաջաբանում, խոսելով ժողովրդական ստեղծագործության և այն կորստից փրկելու մասին, Տ. Նավասարդյանցը գտնում է, որ ազգի անցյալի մասին դատելիս, պետք է նկատի առնել ոչ միայն այդ ազգի՝ մինչև մեր օրերը հասած ճարտասպետական հուշարձանները, արձանագրությունները, դրամները, այլև նրա «խոսուն» նույնությունը՝ հեքիաթները, ազգային հին երգերը, տաճանները, հանելուկները, շուտասելուկները, անեծքները, օրհնությունները և այլն, որոնք, «իբրև նորա մտքի և երևակայության ծնունդ, նորա անցյալ կյանքի, մտավոր զարգացման կենդանի պատկերն են արտացոլում նրանց մեջ»⁵:

Խրախուսելով քաղաքակիրթ ազգերի հաջողությունը բանահյուսական նյութերը՝ ժողովրդի այդ թթանկագին հնությունները, հավաքելու և հրատարակելու ասպարեզում, Տ. Նավասարդյանցը նշում է, որ հայ իրականության մեջ դրանք դեռևս շարունակում են մնալ որպես «ոսումիկ դասի սեպհականություն», ուստի և եթե երևան հանդիսանալի կորստի Այս նկատի ունենալով՝ նա ձեռնարկում է իր հավաքած հեքիաթների հրատարակությանը, նպատակ ունենալով «...ում նյութ առաջարկել հնագետներին և բանասերներին, թողնելով նոցա բնության և հետազոտության»⁶:

Միաժամանակ նա բաշ գիտակցում էր, որ սոսնձին խանգավառ անհատների ջանքերը բավական չեն այս մեծ և պատասխանատու գործի համար. ուստի և հանդես է գալիս մամուլում, ինչպես նաև իր հրատարակած ժողովածուի տարբեր գրքերում, կոչ անելով գրասեր մարդկանց՝ հավաքել և իրեն ուղարկել ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի նմուշներ, որը և կիթաներ իր ձեռնարկած հայրենանվեր գործին:

Եվ ահա, նրա հետևություններ, մեկը մյուսի ետևից սկսեցին լույս տեսնել բանահյուսական-ազգագրական ժողովածուներ, որոնցում արտացոլված են հայ ժողովրդի տարբեր հատվածների բանավեպի գեղեցիկ նմուշներ: Հիշատակենք այդ ժողովածուներից հատկանշականները. Ար. Սեդրակյանի «Քնար մշակվող և վանեցվող» (Վաղարշապատ, 1874), Գ. Տեր-Աղևքսանդրյանցի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» (Թիֆլիս, 1885), Կ. Շերենցի «Վանա սագրս»

⁴ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու. Կ. 4, Երևան, 1951, էջ 378:

⁵ Տ. Նավասարդյանց, Հայ ժողովրդական հեքիաթներ, պրակ 1, Վաղարշապատ, 1882, Առաջաբան, էջ Ա:

⁶ Նույն տեղում, էջ Բ:

(Երկու հատորով, Քիֆիս, 1885 և 1899), Ե. Լալայանի «Մարդարիտներ հայ բանահյուսության» խորագրով հեթանոսների ժողովածուն (Երև. հատորով, Քիֆիս, 1914—1915), Լազարյան ճեմարանի կողմից հրատարակվող «Հմին-յան ազգագրական ժողովածուի» հատորները, Ենվանի հայագետ Ե. Խալաթյանի խմբագրությամբ և այլն:

Հ. Թումանյանը, իբրև ժողովրդին ու նրա մշակույթին անսահմանորեն նվիրված մարդ, ոչ միայն քաջատեղյակ էր այս ամենին ու այրվում էր ժողովրդի տենչերով, այլև բազմիցս անդրադարձել էր ժամանակի այս հուզող պրոբլեմին: Դեռևս 1899 թ. իր նամակներից մեկում, խորապես գիտակցելով ժողովրդական բանավետի անփոխարինելի նշանակությունը, նա մտահոգված գրում է, որ այն հանիրավի մոռացության է տրվում: Զե՛ որ, ըստ նրա, «Ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեզունդաներով, ազգային ոգու ստեղծագործություններով է գործանում ու ինքնուրույնության կնիք առնում, հաստատվում, առաջ գալիս որպես մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի»⁷: Եվ բանաստեղծը, դեռևս անցյալ դարի վերջերից, սկսում է շրջել ժողովրդի մեջ, բուն ակունքներից գլխի առնել գրույցներ ու ավանդություններ, հեթանոսներ ու լեզունդներ, նպատակ ունենալով ըստ ննարավորին ժողովրդական արվեստի ավելի շատ բեկորներ փրկել ժամանակի կորստաբեր ճիւղերից:

Ավելի ուշ, 1909 թ., դիմելով հասարակության լայն զանգվածներին, Հ. Թումանյանը հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ. «Հեղինակը խնդրում է, ով մեր ժողովրդական հեթանոսներից գիտի, բարեհաճի գրի առնի էնպես, ինչպես որ կա, առանց փոփոխելու լեզուն ու բովանդակությունը, թեկուզ շատ անգամ բամբառակ, նշանակի իր հասցեն և թե որտեղից է լսել, ուղարկի՝ Тифлис, Вознесенская 18, Ов. Туманянцу»⁸: Հ. Թումանյանի այս կոչին արձագանքում են շատերը: Ինչպես նշում են նրա ժամանակակիցները, նա գրեթե ամեն զավառում ուներ իր «թղթակիցները»¹⁰:

1910 թ. Հ. Թումանյանը հանդես է գալիս «Ազգագրական գործը մեզանում» հրապարակախոսական հոդվածով, որտեղ հայերին բնորոշելով որպես աշխարհի և Արևելքի ամենահին ազգերից մեկը, որն ազգագրության տեսակետից ուսումնասիրության շատ հետաքրքիր աղբյուր է, ցավ է հայտնում, որ, ի թիվս այլ հոգևոր արժեքների, ժողովրդական ստեղծագործությունը ևս մնում է տակավին բավարար չափով չուսումնասիրված, չբացահայտված և

7 Հ. Թ. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 147:

8 Հ. Թումանյանի առաջին զրական փորձերը՝ լուսնիների մասին զանազան զվարճալի պատմություններ, տպագրվել են «Նոր-դարի» 1887 թ. №№ 121, 132, 133, 134, 136, 137 և 140-ում: Անստորագիր այս նյութերի՝ Թումանյանի գրչին պատկանելու պարզել է գրականագետ էդ. Ջրաշյանը իր «Թումանյանի առաջին տպագիր ելույթները» («Գրական թերթ», 1963, № 23) և «Նորահայտ էջեր Թումանյանի ժառանգությունից» (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 12, էջ 69—73) հոդվածներում:

Միաժամանակ Թումանյանը հանդես է եկել նաև բանահյուսական խորք ունեցող իր առաջին ստեղծագործություններով՝ «Շունն ու կատուն», «Անյախտ վաճառականներ», «Գութանի երգը», «Հին օրհներգություն», «Մարտն» և այլն:

9 Տե՛ս Հ. Թումանյանի «Մանկական գրադարան» մատենաշարի հրատարակությունն «Կսեն-լու առթիվ լույս րնծայած ազգը» (Քիֆիս, 1909):

10 «Թումանյանի ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969 (Վրեն Տաշրացու, Գեվորգ Մեսյանի, Սերիկ Դավթյանի հուշերը):

մոռացության մատնված: Նա բարձր էր գնահատում Քիջլիսի հայոց ազգա-
դրական ընկերության, վերջինիս պաշտոնաթերթ «Ազգադրական հանգես»
ամսագրի և դրանց հիմնադիր ու ղեկավար Ծովանգ Հայալանի ազդանվեր ու
անդուլ գործունեությունը, որոնց շնորհիվ ժողովվում և կորստից փրկվում են
ժողովրդական ստեղծագործության տարբեր ժանրերի բազմաթիվ նմուշներ:
Ժողովրդի ցավերով ու շահերով ապրող մեծ հումանիստը «ամենայն հոռնդով
ու սիրով հորդոր» է կարդում «մեր ուսուցիչներին ու ամեն տեղ ցրված կարող
մարդկանց, որ աչակցեն օր առաջ հավաքելու մեր հին կուլտուրայի ու կյանքի
մնացորդները և այսօրվա եղածը ի մի, որ տեսենք՝ ի՞նչ ենք ունեցել և ի՞նչ
ունենք»¹¹: Նույն՝ 1910 թ. իրեն հուլիսի այս հարցին նա անդրադարձել է նաև
«Մի երկու խորհուրդ մեր զավառական մամուլին» հոդվածում: «Ճին սերունդը,
—ասում է նա,—իր իմացածը հետը դրեզման է տանում, իսկ նոր սերունդը՝
չգիտի»¹²: Այս կապակցությամբ՝ Հ. Թումանյանը խորհուրդ է տալիս զավա-
ռական թերթերին իրենց էջերում մշտապես տեղ տալ ժողովրդական բանա-
հյուսության նմուշներին և ժողովրդի կյանքի այլևայլ կողմերի նկարագրու-
թյանը, որոնք առատուհն կարելի է բազմի շրջապատից: Ռեզ ձևը շատ բա-
ժինները՝ եթե վաղը չէ, մյուս օրը կկորցնեն իրենց արժեքը, բայց էդ անկյունը
բանի փնա, ավելի ու ավելի կարևորություն կանի, ու ապագա սերունդը,
մանավանդ գրականությունը, շնորհակալ կլինի ձեզանից...».—խորիմաստ
կերպով նկատում է նա¹³:

Կուտակված բանահյուսական «հում նյութը» պահանջում էր ժողովրդի
հոգևոր մշակույթի զանազան նկատմամբ ուղադրության և գնահատության լուրջ
փոփոխություն, և առաջնահերթ էր դառնում դրանք ղեկավարվածություն մշակելու
և հանրության սեփականությունը դարձնելու հարցը:

Ժողովրդական անգիր ստեղծագործության նմուշները մշակելու առաջին
փորձը հայ գրականության մեջ արել է հայ մեծ լուսավորիչ հնաշատուր Աբով-
յանը: Նրա «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն ամփոփում է ժողովրդի
կյանքից բաղած դրույցներ, ավանդություններ, անեկդոտներ՝ կերտված պարզ,
ժողովրդական-խոսակցական հյութեղ լեզվով: Բայց հ. Աբովյանի մոտ հե-
քիաթի, ավանդության, զվարճալի դրույցի ժանրերը տալուընչված չեն և միմ-
յանցից խստորեն չեն սահմանադատվում և բանի որ, բոտ հ. Աբովյանի. Ժո-
ղովրդին ամենից ավելի դուր են գալիս առակները, ուստի նա հեքիաթի ժան-
րին մոտ բանահյուսական նյութերը մշակել է առակի ձևով, նկատի ունենա-
լով հեքիաթի և առակի միջև առկա ընդհանուր՝ այլաբանական, կողմը: Այնու-
հետև, այս ժողովածուի մեջ մտնող ստեղծագործությունները տողորված են
քնարականությամբ, ոտմանտիկ շնչով. մի հանգամանք, որն ավելի է հեռաց-
նում դրանց հեքիաթի ժանրից: Այս առումով առաջին խոշոր հեքիաթագիրը
հայ գրականության մեջ Ղազարոս Աղայանն էր: 1881 թ. հրատարակած իր
«Անահիտ» հեքիաթով նա սկիզբ է դնում հայ հեքիաթագրությանը: Օղտվելով
այն և անդրկովկասյան ժողովուրդների բանահյուսական գրավոր և բանավոր
աղբյուրներից, Ղ. Աղայանը գրում է հեքիաթներ, որոնք անգնահատելի դեյ-
նե կատարել հայ մանուկների բաղմամբիվ սերունդների բարոյա-կրթական դաս-

¹¹ Հոգի հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 147:

¹² Նույն տեղում, էջ 113:

¹³ Նույն տեղում, էջ 114:

տիրակության գործում:

Իր գրական մեծ նախորդներից և ուսուցիչներից ավելի առաջ անցավ Հ. Թումանյանը: Գիտակցելով, որ ժողովրդական ստեղծագործության զանազան արժանի են նեոարրերության և մանրակրկիտ հետազոտության, նա չէր բավարարվում միայն գրասեր հասարակությանը հորդորելով՝ հավարել և ուսումնասիրել գրանք, այլև ինքն էր մշակում ժողովրդական բազմաթիվ երգեր, ավանդություններ, հերիաթներ, լեզենդներ, դրույցներ՝ հարստացնելով մեր գրականությունը բազմապիսի գեղեցիկ և ինքնատիպ ստեղծագործություններով:

Բանահյուսական բեմաների և հատկապես, հերիաթների գեղարվեստական մշակմանը Հ. Թումանյանը մոտեցել է սիրով, երկյուղածությամբ, զգուշորեն: Բազմաթիվ բանահյուսական և ազգագրական ժողովածուներից և մասնավորապես, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» և «Сборник сведений о кавказских горцах» մատենաշարների տարրեր հատորներից նա հավաքել է ինչպես հայկական, այնպես էլ վրացական, ադրբեջանական, ռուսական, ասորական, չեչենական, մենդելյական, իմերեթական, ադիգեյական և կովկասյան լեռնական այլ ժողովուրդների հեյիսթների այլևայլ տարբերակներ, բաղդատել միմյանց հետ և բանասեր-բանագետի ու փայլուն գեղարվեստագետի եզակի ունակություններով զինված յուրարանչյուր տարբերակից ընտրել է լավագույնը, բնականն ու բանականը, հղկել է գրանք, հարստացրել նոր կերպարներով ու զևպրեով, դարձրել ավելի կուռ ու նպատակասլաց և հյուսել իր՝ Թումանյանական ստեղծագանց հերիաթները:

Մանրթանալով Հ. Թումանյանի արխիվի՝ հերիաթներին վերաբերող բազմաթիվ անտիպ ինքնագրերին՝ կարելի է համոզվել, որ յուրարանչյուր հերիաթ ստեղծելիս նա կատարել է լուրջ, լարված և տքնաջան ստեղծագործական աշխատանք՝ ունենալով իր որոշակի սկզբունքները: Ի պատասխան Ա. Կարինյանի այն հարցին, թե «Իրավունք ունի՞ արդյոք բանաստեղծը փոփոխել ժողովրդական ստեղծագործության սյուժեն», Հ. Թումանյանը պատասխանել է. «Իհարկե, ավելի լավ է՝ միշտ հավատարիմ մնալ աղբյուրին, հետևել բնագրին: Սակայն առանց փոփոխություն մտցնելու անհնարին է կերտել նոր և ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործություն: Սյուժեն էլ ունի նշանակություն. բայց հիմնականը գեղարվեստական վերամշակման նոր ձևն է: Հարկավոր է էնպես գրել, որ ժողովրդի խոսքը, հոգին ու սիրտը ցուցադրվեն: Ես ա՛ն հենց էդպես եմ ջանացել մոտենալ նյութին»¹⁴:

Խստապահանջ գեղագետը չէր ընդունում ո՛չ մի թերացում, ո՛չ մի անփութություն, երբ խոսքը վերաբերում էր ժողովրդի բանավիճակին, որի նկատմամբ նրա սերն ու պատկանանքը անսահման էին: «Ամենամեծ ստեղծագործողը,— ասում էր նա,— ժողովուրդն է, ու նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հերիաթն»¹⁵: Այս տեսակետից հատկանշական է Հ. Թումանյանի կարծիքը ժողովրդական հերիաթի և նրա մշակման մասին: Թումանյանը Մարդիս Քամայանի մշակած հարցին, թե ի՞նչ կարծիքի է Հ. Թումանյանը Սարգիս Քամայանի մշակած

¹⁴ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», էջ 793:

¹⁵ Նույն տեղում, էջ 626:

հեքիաթների մասին, բանաստեղծը պատկերավոր ձևով պատասխանել է, թե վերջինս ճշման է էն անտիկվարին, որը սարի գագաթին մի մարմարե արձան է գտնում, օրինակ՝ Վեներայի անդրին, վզից մի թուկ է կապում ու սարի վրայով բաշ տալի, բերում քաղաք, նրա նուրբ մասերը՝ մատները, ականջը, քիթ-պոտնոցը ջարդած, փշրած... Հեքիաթի էությունն էլ հենց էդ նրբությունների մեջ է»¹⁶:

Գեղարվեստական մշակման ենթակա ժողովրդական բանավեպերի նմուշներին Հ. Թումանյանը վերաբերվել է բարձր պատասխանատվությամբ, հրավան հանել տարբերակների ընդհանրություններն ու տարբերությունները, գիտնականի պես պատմական և բանասիրական հետախույզումներ է կատարել, կրկին ու կրկին ընթերցել ու վերընթերցել դրանք, արել ուշադրավ հետևություններ: Եվ միանգամայն արդարացի է նրա հեղինակն ու դառն հիասթափությունը իրեն «բանագող» որակող նորահայտ քննադատի նկատմամբ, հրապարակում է. «...ես ավելի զգույշ ու լուրջ եմ վերաբերվել մի «ծտի», քան թե դուք՝ մի «գրական մեծություն»¹⁷:

Ժողովրդական բանահյուսության նկատմամբ «զգույշ» ու լուրջ» վերաբերմունքն է պատճառ, որ դեռ 1907 թ. մոտ 400 հեքիաթ ուսումնասիրած արվեստագետը գրեթե տասնհինգ տարի հետո միայն, 1923 թ. է իրեն պատրաստ համարում ասելու. «Բոլոր ժողովուրդների հեքիաթները հավաքել եմ, բոլոր հրատարակություններն իր ժամանակին դնել, պահել. ինչքան հեքիաթ ունեմ գրելու...»¹⁸:

Եվ, վերջապես, իր ստեղծագործության նկատմամբ անսահման խոստ-պահանջության վկայություն չէ՞ այն, որ հրկադ տարիներ ազգագրական զանազան ժողովածուներից, ամսագրերից և ժողովրդական ասացողներից այնքան խնամքով ժողովելով «Հազարան բլբուլը» բազմաթիվ տարբերակներ, 1922 թ. միայն, Պ. Մակինյանին հղած նամակում, գրում է. «Եվ այժմ հիմա ասում եմ՝ «Հազարան բլբուլը» կտամ, որովհետև հավաքել եմ երկար տարիների բնթացքում նրա վաթսուհից ավելի վարիանտներ»¹⁹:

Հ. Թումանյանը երկար ժամանակ ստեղծագործական որոնումների մեջ էր, փնտրելով իր հոգուն այնքան մոտ՝ խոր, նուրբ և «սանձարձակ ֆանտազիայով» օժտված այս ճոխ հյուսվածքը համապատասխան ձևով մատուցելու ձևը: Հայտնի է, որ նա սկզբնապես որոշել էր «Հազարան բլբուլը» մշակել որպես պոեմ, և եռանդով գործի կապել, մի քանի հատված շարադրել, բայց հետո միտքը փոխել է և այս անգամ փորձել դրամայի ձևով վերարտադրել այն, ապա նորից հրաժարվել և մտադրվել է սյուժեն դարձացնել սրձակ պատումի ձևով: Վրա հասած պատերազմը կիսատ է թողնում նաև այս ծրագիրը: Եվ այնուհետև, մինչև իր կյանքի վերջը, Հ. Թումանյանն հաճախ է անդրադառնում «Հազարան բլբուլին», կարդում է իր մշակումներից հատվածներ, ոգևորվում ու ոգևորում, հիանում ու հիացնում, մտորում ու շրջապատի հետ կիսում իր խոհերը հեքիաթի այլաբանական բովանդակության և դրա նկատմամբ իր վերաբերմունքի մասին: Հիշենք «Հազարան բլբուլի» մասին Հ. Թումանյանի կարծիքը:

16 Ն. Վ. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 125:

17 Հ. Վ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 100:

18 Ն. Վ. Թումանյան, Հուշեր և զրույցներ, էջ 313:

19 Հ. Վ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 472:

1900 թ. Փիլ. Վարդապետյանին ուղղած նամակում՝ որտեղ գեղադետ արվեստագետը, անդրադառնալով այս հերիաթի հիմնական դադափարի մասին բանադիտության մեջ տարածված կարծիքին՝ դարևան դալն է հերիաթի առարկան. «... իմ կարծիքով՝ բանաստեղծության ու մուդիկայի ծնունդն է հերիաթի առարկան»²¹։ Ինչպես իրավացիորեն նկատում է գրականագետ էդ. Ջըրբաշյանը, «ի՞նչ ոչ մի այլ ստեղծագործության Թումանյանը չի մոտեցել այդպիսի մեծ նախադասարասական աշխատանքից չէր»²², ինչպես «Հաղարան բլրուին»։ Հ. Թումանյանը չի շտապել թղթին հանձնել մտահղացումը, բոտ երևույթին իրեն դեռևս լիովին պատրաստ չհամարելով այդքան տարիները փայփայած երազանբը և հենց իր՝ բանաստեղծի կողմից իր ստեղծագործությունների գլուխգործոց՝ համարվող «Հաղարան բլրուր» վերջնականապես կերտելու համար։

Ուսումնասիրության առարկայի նկատմամբ Հ. Թումանյանի ցուցաբերած յուրյ և համակուղմանի մոտեցման մասին է խոսում նաև բանաստեղծի դոստորը՝ նվարդ Թումանյանը, երբ իր հուշերում անդրադառնում է 1917 թ. ամռանը Պլատիգորսկում հայկական ժողովրդական հերիաթների մասին Մ. Շահինյանի կարդացած զեկուցման կապակցությամբ բանաստեղծի հայտնած կարծիքին։ Հ. Թումանյանը դժգոհ է մնում այդ զեկուցումից նախ այն պատճառով, որ հեղինակը ժողովրդական բանահյուսությունը և, բնդհանրապես, հայկական հերիաթները մանրամասնորեն բնեկու փոխարեն սահմանափակվել էր բացառապես բանահավար Տ. Նավասարդյանցի հրատարակած հերիաթների ժողովածուի ուսումնասիրությամբ։ Նրան հատկապես զարմացրել ու զայրացրել է երիտասարդ հետադոտողի շտապողականությունը։ «էսքան տարի է՝ հերիաթ եմ հավարում, ուսումնասիրում, եւ դեռ ոիւկ չեմ անում հրավարակ գալու, հերիաթի մասին խոսք ասելու. սա էս ինչե՞ր է ասում»։²³

Պետք է ասել, որ տալիներ ընթացքում հավաքելով տարբեր ժողովուրդների բաղմաթիվ հերիաթներ և լուսաբանելով դրանց հետ կապված ալլեալլ հարցեր, Հ. Թումանյանը ծրագրել էր հայ ժողովրդական հերիաթների մասին հատուկ ուսումնասիրություն գրել, գտնելով, որ հերիաթները դեռևս բավարոտ ուղարրության չեն արժանացել ժամանակի բանաւերների և բանագետների կողմից, ինչպես նաև երազում էր իրականացված անսնել հայկական հերիաթների պիտական հրատարակությունը։

Հ. Թումանյանը չափազանց բարձր կարծիք ուներ հերիաթի մասին, իբրև գրական տեսակի, բնութագրելով այն որպես «գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունը, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են»²⁴։ Ըստ նրա դիպուկ բնորոշման՝ «Հերիաթները անդունդներ են՝ խորը, անծայր. սնվելը...», «նույնիսկ հունճարները հերիաթ չեն կարողանում ստեղծել. բայց հերիաթներ ինչ կգտում»²⁵։

²¹ Այս նամակի գրության թիվը, որը Հովհ. Թումանյանի երկերի ժողովածուի 5-րդ հատորում համարվում էր 1899, ճշտված է բոտ Ա. Ինձիկյանի «Հովհաննես Թումանյան» (Երևան, 1969) գրքի։

²² Նույն տեղում, էջ 155։

²³ էդ. Ջըրբաշյան, Թումանյանի պոեմները, Երևան, 1964, էջ 409։

²⁴ Նվ. Թումանյան, Հուշեր և շրույցներ, էջ 186։

²⁵ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, Տ. 5, էջ 472։

²⁶ Նվ. Թումանյան, Հուշեր և գրույցներ, էջ 254։

Իր ողջ կյանքում, այս կամ այն կերպ առնչվելով ժողովրդական բանահյուսության և, մասնավորապես, հեքիաթի ժանրի հետ, Հ. Թումանյանը գիտնական-բանագետի նման քննում է վերջիններիս հետ կապված տարբեր հարցեր և զանազան առիթներով կրկին ու կրկին անդրադառնում դրանց: Դեռևս 1894 թ. իր «Խորենացու «Տենչայր Սաթենիկ» հատվածի առթիվ» հոդվածում ժողովրդի կյանքի և հոգևոր մշակույթի այս կամ այն կողմը բացատրելու հավաստի կովաներ Հ. Թումանյանը փնտրում է հենց իր՝ ժողովրդի մոտ. «Ահա սպիտակ ժողովուրդն է շինում, պահում և պատմում, նրա սեփականությունն է, և նրան պետք է դիմել»²⁶: Նույն հոդվածում, խոսելով ժողովրդական բանահյուսության մասին, նա գտնում է, որ զանազան ձևերով հանդես եկող առասպելական անձնավորությունների և իրադարձությունների մեջ աշուտացվում են ժողովրդի երազանքներն ու զգացումները, որոնք «ավելի ընդհանուր, ընդարձակ և մնայուն» են, «մի խոսքով՝ բոլորին հասկանալի և բոլորինը»²⁷: Այս նույն միտքն է արտահայտված նաև Հ. Թումանյանի մի սևադիր ինքնագրում²⁸, որտեղ, քննելով այն հարցը, թե ինչ առնչություն է ունեցել ժողովուրդը իր բանավետի նկատմամբ, Հ. Թումանյանը գրում է. «Ժողովուրդը չի հնարել, այլ պատմել է այն, ընչի հավատացել է»²⁹: Հետաքրքիր է նշել, որ սա Ա. Աֆանասևի միտքն է (հմմտ. «Народ не выдумывал; он рассказывал только о том, чему верил»)²⁹, որին միանգամայն համաձայն, Հ. Թումանյանը լրագրամանբար արտագրում է այն և դարգացնելով, գտնում, որ այդ է պատճառը, որ ժողովուրդը դարեր ի վեր պահում է հին պաշտամունքները ու հավատալիքները, որոնք հաճախ խեղաթյուրված են ժամանակի ընթացքում: Իր դրույցներից մեկի ժամանակ, խոսելով մարդկանց վրա հեքիաթի թողած հզոր և անջնջելի ազդեցության մասին, Հ. Թումանյանը նույն այս միտքն է հայտնում. «Ժողովուրդը հեքիաթում պատմում է էն, ինչ որ ուզում է տեսնել իրականացած»³⁰:

Բանաստեղծի արխիվում պահպանվում են նրա սևագիր, անտիպ գրառումները հեքիաթի մասին, որոնցից մեկում, օրինակ, քննելով հեքիաթը որպես ժողովրդական բանահյուսության անդրադարձ ժանրերից մեկը, Հ. Թումանյանը գրում է, որ այն իր ծագման ու դարգացման ընթացքում ենթարկվում է զանազան փոփոխությունների և իր վրա վերցնում «ամեն տեղի ու ժամանակի կնիքն ու նշանը, որոնք շատ անգամ որպես մի դժվարալուր հակաձայն՝ դիտմանս, փչացնում են ամբողջի ներդաշնակությունը և հակասում են իրար»³¹: Եվ որպես օրինակ այս մտքի, մի այլ դեպքում բերում է օրինակներ, որտեղ հեքիաթների սյուժեներին միաձուլվում են «հակաձայն» մոտիվներ. «Ահա... մի հեքիաթ, որ անունները պարսկական են, կախարդությունների ժամանա-

²⁶ Հոդվ. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 14:

²⁷ Նույն տեղում, էջ 15:

²⁸ Ծ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի արխիվ, № 145:

²⁹ Предисловие А. Н. Афанасьева ко 11 изданию «Народных русских сказок», кн. I, М., 1873, с. VI:

³⁰ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», էջ 612:

³¹ Հ. Թումանյանի թանգարանի հավաքածու (այսուհետև՝ ԹԹՀ), № $\frac{10}{838}$, Այս հավաքածուի մասն են կազմում Հ. Թումանյանի մի շարք ստեղծագործական ձեռագրեր, որոնց թնայինը պահվում են Բանաստեղծի ժառանգների մոտ:

կից է խոսում և հիշատակում է խաչը³², կամ մատնանշում մի այլ ղեպը, երբ «մարդու պաշտամունքի առարկաներ են բնությունն և յուր նրեությունը, և այդ բոլորի մեջ կանգնած է քրիստոնեությունը»³³։

Այս առիթով խոսելով հայկական ժողովրդական Ներթափանցող վրա ունեցող ժողովուրդների ազդեցության մասին, Շ. Թումանյանը վկայակոչում է Տ. Նավասարդյանցի կազմած «Հայ ժողովրդական Ներթափանցող 7-րդ պրակտում լույս տեսած «Բախտավոր արար» Ներթափ վերջաբանը՝ «ես այ հոն էի, դին խմեցի, պուխիսնս վազեցավ, պիսանս լզեացա», և նշում, որ սա ակներև ազդեցությունն է ուսական Ներթափանցողի «11 я там был, мед и вино пил...» վերջաբանի³⁴։

Հետաքրքիր են Շ. Թումանյանի հղյաճանդումները, երբ նա բնում է տարբեր ժողովուրդների Ներթափանցող վրա նրանց կրոնների ազդեցության նախընդհատում հայկական Ներթափանցողի հերոսը իր հաղթական ճամփին մի քանի վաճառական ազգի հաղթելով կամ սիրունի տիրելով՝ իրեն կին է առնում³⁵։— գրում է Շ. Թումանյանը, նկատի առնելով այն արտոնությունը, որ բնականում է մասնակցականներին իսլամական կրոնը, ըստ որի՝ յուրաքանչյուր տղամարդ կարող է ունենալ մեկից ավելի օրինական կին։ Մինչդեռ հայկական կամ վրացական (այսինքն՝ քրիստոնյա ազգերի) Ներթափանցումը «այդպիսի ղեպերում բիր ու ախպեր են դառնում... կամ տալիս ուրշին»,— շարունակում է Շ. Թումանյանը և, ի հաստատումն այս գրույթի, բերում Տ. Նավասարդյանցի Ներթափանցողի ժողովածուի 3-րդ գրքում լույս տեսած «Ջանգուղում» Ներթափ օրինակը³⁶։ Ի ղեպ, մի այլ առիթով այս կապակցությամբ (երբ Ներթափ հերոսը եղբայրանում է ղեզանի ազգի հետ կամ այլևայլ պատճառներով չի կարող ամուսնանալ նրա հետ) Շ. Թումանյանը մեջտեղ է բերում այս երևույթի պատմական մի դուգաճեղ։ «Միջին դարերում ասպետները իրենց 13-րդ դարում սրտի տիրելի հետ, երբ ղեպը էր լինում բնելու, թուրը մեջտեղն էին ղեղում ու բնում»³⁷։

Շ. Թումանյանի թղթերում պահպանվել է Ներթափ մասին հետևյալ միտքը. «Հերթափ չի ճանաչում պատմական և աշխարհագրական որոշություն (определенность)»—միշտ սկսում է՝ մի թագավոր, մի ժամանակ, մի երկ-

32 Նույն տեղում, Ն. $\frac{10}{837}$,

33 Նույն տեղում, Ն. $\frac{10}{838}$,

34 Նույն տեղում, Ն. $\frac{1008}{8213}$,

35 ԹՔԶ, Ն. $\frac{1008}{8195}$, Այս հարցին Շ. Թումանյանն անդրադարձել է նաև իր «Կինն ու մասնակցական պետությունների անկումը» հոդվածում (Հոգևոր, Թումանյան, Ծրվերի հոգևածու, հ. 6, Ե., 1959, էջ 208—211), որտեղ նա բնում է կնոջ վիճակը տարբեր կրոններ ղափանդ հասարակությունների մեջ։ Եվ, ի տարբերություն հայերի կամ վրացիների, որոնց մոտ կինը հարգանքի ու մեծարանքի է արժանանում, հումանիստ գրողը ղառություններ է ներկայացնում հարեմում փակված սկյանքի վայելքին, որը, փաստորեն, ստրկու ու վիճակում է։

36 Նույն տեղում, Ն. $\frac{1078}{8196}$,

37 Նույն տեղում, Ն. $\frac{1008}{8211}$,

րում... Գնում է, գնում, հասնում է մի աշխարհ ենք³⁸։ Ընդհանուր առմամբ բն-
դունելով այս ճիշտ դրույթը՝ Հ. Թումանյանը այլ առիթներով բերում է այս
հարցի կապակցությամբ իր նկատառումները, որոնք երբեմն չեն ներդաշնա-
կում այս պնդմանը. «Էբրիաթի անուններում,— գրում է նա,— զեպրերն ու
տեղերը կապում են իրենց երկրի տեղերի կամ մարդոց հետ»³⁹։ Այնուհետև
նա նշում է տարբեր հերթաթերթից առնված համապատասխան փաստեր։ Օրի-
նակ՝ նույն այս գրառման մեջ նա բերում է «Հմինյան աղագորական ժողո-
վածուի» 2-րդ հատորում հրատարակված «Բժիշկ լոխման» հերթաթից Շա-
վարարի գերեզմանի մանրամասնը կամ հիշատակում ուն գյուղը, որ ոձերն
ավերեցին⁴⁰, իլան Կելուրեն ստույգ սնունով։ Իսկ մի այլ սեպիր գրառման
մեջ Հ. Թումանյանը բերում է պատմական անձնավորությունների՝ Սինամ
թագավորի, արքայազն Գեորգիի, Շահ-Աբասի, Թամար թագուհու անունները
ապացուցելու համար, որ հերթաթերթում և էպոսներում իբրև հերոսներ կարող
են հանդես գալ նաև իրական անձինք, կամ բերում «Сборник шведский о
кавказских горцах» մատենաշարի 3-րդ հատորում հրատարակված «Девоч-
ка-чародейка» հերթաթի օրինակը, որտեղ «պատմողը մինչև անգամ անձն-
րի ու տեղերի անուններն է տալի և կապում իրենց տոհմի հետ»⁴¹։

Հետաքրքիր է մեկնաբանում Հ. Թումանյանը հերթաթերթում հանդես
վերցնող անսովոր ուժի և բնդունակությունների տնը ձիերի հետ կապված դրո-
վագները՝ գտնելով, որ մարդկանց կողմից ձիերին առասպելական հատկանիշ-
ներով օժտելը գալիս է մարդկության պատմության վաղ շրջանից, սերը առա-
ջին անգամ ձին հայտնվեց և ստրապի ազդեց ձի լսեւած ժողովուրդների վրա-
նվ առաջին դարերում մեծ մասամբ շնորհք վերագրում են ձիուն՝ արագ
իմաստուն, հզոր»⁴²։

Հ. Թումանյանի արխիվում պահպանված զանազան անտիպ գրառումների
բննությունից պարզվում է, որ նա հայնական և ուրիշ ժողովուրդների հերթաթ-
ներին դուրս է գրել և խնամքով պահպանել իրեն դուր եկած բառաձևեր, ար-
տահայտություններ, ոճեր, ինչպես նաև զանազան երկխոսություններ, մո-
տիվներ և հերթաթերթի սկիզբ ու ավարտ արտահայտող դրվագներ, որոնցում
արտացոլված են տարբեր ժողովուրդների հոգեբանությունը, հոգևոր մշակույ-
թը և, վերջապես, լիզվամտածողությունը։ Ավելորդ չենք համարում մի քանի
նմուշ ներկայացնել այս գրառումներից։ Ահա Հ. Թումանյանի բնարած ոճն-
րից մի քանիսը.

«Գիշեր ծով եմ, կծիքամ, ցերեկ եղեգ՝ կրեւրամ»⁴²։

38 Նույն տեղում, Մ $\frac{1003}{8214}$

39 Նույն տեղում, Մ $\frac{1008}{8214}$

40 Նույն տեղում, Մ $\frac{1008}{8195}$

41 Նույն տեղում, Մ $\frac{1008}{8211-8212}$

42 Նույն տեղում, Մ $\frac{1008}{8203}$

«Մին թուրք դարկեց՝ վահանը կտրեց, մինչև ուներ հասավ»⁴³։

«Հրեղեն տղերք, փարեղեն աղջիկներ»⁴⁴։

«Էնքան զորք զուրս եկավ, որքան խոտ կա զաշտում, էնքան զրոշակ, որքան ծաղիկներ կան էն խոտերում»⁴⁵։

«Ականջով լսեցիք՝ ապրեցե՛ք մինչև աչքով էլ տեսներ»⁴⁶։

Ուշագրավ է, որ զիջարվեստագետի պրպտուն միտքը չի մնացել սոսկ լիզվական փաստերն արձանագրողի դերում, այլ իր մտորումներով, նկատառումներով ու բացատրություններով, երբեմն ընդմիջել է մեջբերումը։ Օրինակ՝ «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» ժողովածուի 10-րդ գրքում գետնի վրա մենգրելական հերթափոխ արտադրելով մի հետաքրքիր արտահայտություն՝ «Она так обрадовалась, что небо ей шло попой, а земля чуждой показалась», Հ. Թումանյանն անմիջապես ավելացնում է. «Հայկ<ական> հերթափոխում՝ աշխարհքով մին էլավ»⁴⁷։ Կամ՝ «Աղգագրական հանդեսի» XIX գրքում հրատարակված «Կիսլանջ» հերթափոխ Գնանք տեսներ մեր երկրի վերն ու դիրն ինչ ա» արտահայտությանը հետևելով է փակագծերում բերված Հ. Թումանյանի բացատրությունը. «զրույթունը, ապրելու եղանակը»⁴⁸։

Սևագիր պատասիկներից մեկում անդիպում ենք նաև մի այլ պատկերավոր ոճի՝ «Հողին հղավ մի կորեկի հատ», որին Հ. Թումանյանն ավելացրել է իր նկատառումը. «գուցե վախից»⁴⁹։

Ահա Հ. Թումանյանի ընտրած հերթափոխների մի քանի ակիզք և վերջաբան.

«Վաղուց, եղել է, թե չի եղել՝ չգիտեմ, ես լսել եմ ծերերից, նրանք էլ իրենց պապերից, պապերն էլ՝ իրենց մեծերից, թե ևն»⁵⁰։

⁴³ Նույն տեղում, Ֆ՝ $\frac{1008}{8206}$ ։

⁴⁴ Նույն տեղում, Ն՝ $\frac{1008}{8207}$ ։ Այս արտահայտությունը Հ. Թումանյանն ազտագործել է

իր «Ոսկի քաղաքը հեթանոսում, Գոհար թագուհուն բնորոշելիս՝ «հրեղեն-փարեղեն», ինչպես նաև՝ «Եկտուրից իջած կիներ» հեթանոսում, որտեղ «...զամբյուղից զուրս եկան տասներկու հրեղեն-փարեղեն աղջիկներ»։

⁴⁵ Նույն տեղում, Ջ՝ $\frac{1008}{8364}$ ։

⁴⁶ Նույն տեղում, Ն՝ $\frac{1008}{8365}$ ։

⁴⁷ Նույն տեղում, Ջ՝ $\frac{1008}{8199}$ ։

⁴⁸ Նույն տեղում, Ն՝ $\frac{1008}{8215}$ ։

⁴⁹ Նույն տեղում, Ջ՝ $\frac{1008}{8208}$ ։ Ի դեպ, Թումանյանն այս արտահայտությունը հենց այս իմաստով էլ ազտագործել է «Քաջ Նազար» հեթանոսում, բնորոշելով վազրի տեսքից սարսափահար եղած Նազարին՝ «...հողին դառել է կորեկի հատ»։

⁵⁰ Նույն տեղում, Ջ՝ $\frac{1008}{8207}$ ։ Այս սկզբածքը Թումանյանն ազտագործել է «Ոսկու կառարար» հեթանոսում. «Ես մեր ծերերից եմ լսել, մեր ծերերը՝ իրենց պապերից, նրանց պապերն էլ՝ իրենց մեծերից, թե...» և այլն։

«Մինք կար, մյուսը չկար, բացի աստված ոչինչ չկար»⁵¹,

«В нек <отором> царстве, в нек <отором> государстве, в Испанск<ом> королевстве, в городе Москве спит на голой доске, в городе Париже, к семейству поближе—жил и т. д.»⁵².

«Մեռավ—հերիաթս և վերածափ: Եթե էլ ապրեր, իհարկե հերիաթս էլ կշարունակվեր»⁵³,

«Сказке конец—доброму делу начало (дайте на хлеб бедному деревнищу»⁵⁴,

«Я там был, много вина пил. Печаль оставил там, веселье принес сюда»⁵⁵.

Արթիվայրն այս և նմանորինաս այլ բաղաժիվ նյութերի ըննությունը ցույց է տալիս, որ ժողովրդի արվեստին ու մշակույթին անմնացորդ նվիրված բանաստեղծը ամենատարբեր առիթներով և մեծ սիրով ու հետևողականությամբ հավաքել, մշակել և գասակարգել է ժողովրդական այդ ճոխ և անհատնում գանձերը՝ զարդարելու իր ստեղծագործությունը. նաև հայ գրականությունը, նորանոր գոհարներով:

НАРОДНЫЕ СКАЗКИ В ТВОРЧЕСКОМ КРУГОЗОРЕ ОВАНЕСА ТУМАНЯНА

АНАИТ ВАРТАНЯН

Резюме

Ованес Туманян высоко ценил и бережно относился к фольклору, считая его выразителем национального духа народа. Он не только занимался сбором и исследованием фольклорных материалов, но и сам обрабатывал народные сказки, легенды, песни, обогащая нашу литературу яркими и талантливыми произведениями.

Исследование неопубликованных материалов из архива Ов. Туманяна явствует об огромной творческой работе, сделанной писателем в области обработки народных сказок.

51 Նույն տեղում. № $\frac{1008}{8201}$,

52 Նույն տեղում, № $\frac{1008}{8200}$,

53 Նույն տեղում. № $\frac{1008}{8208}$,

54 Նույն տեղում, № $\frac{1008}{8201}$,

55 Նույն տեղում,